

**4.1.2 Մարդասիրական օգնություն**

Ըստ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրած բեռնամաքսային հայտարարագրերի տվյալների, 2016թ. հունվար-մարտին մարդասիրական օգնության կարգով Հայաստանի Հանրապետություն են ներմուծվել 395.4 տոննա ապրանքներ, որոնց արժեքը կազմել է 3 729.0 մլն. դրամ կամ 7 667.4 հազ. ԱՄՆ դոլար: Ստացված օգնության 46.8%-ը կազմել են քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքը, 23.1%-ը՝ մանածագործական իրերը, 8.6%՝ տարբեր արդյունաբերական ապրանքները, 7.2%-ը՝ մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմները, 6.9%-ը՝ քարից, գիպսից, ցեմենտից իրերը, իսկ 7.4%-ը՝ մնացած ապրանքները:

**Մարդասիրական օգնության ծավալն ըստ ապրանքային բաժինների**

	2015թ. հունվար-մարտ			2016թ. հունվար-մարտ			Աճի տեմպը, %
	քաշը, տոննա	արժեքը		քաշը, տոննա	արժեքը		
		մլն. դրամ	հազ. դոլար		մլն. դրամ	հազ. դոլար	
<b>Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը</b>	<b>410.5</b>	<b>3 755.2</b>	<b>7 866.2</b>	<b>395.4</b>	<b>3 729.0</b>	<b>7 667.4</b>	<b>97.5</b>
այդ թվում՝							
բուսական ծագման արտադրանք	31.7	99.6	209.5	1.3	28.1	58.5	27.9
կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	17.5	31.0	64.6	17.5	29.9	62.2	96.3
պատրաստի սննդի արտադրանք	86.7	108.8	227.2	26.3	54.4	112.3	49.4
հանքահումքային արտադրանք	0.5	0.3	0.6	0.0	0.0	0.0	0.0
քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	36.1	1773.9	3721.2	19.2	1734.5	3589.7	96.5
պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր	10.2	74.7	156.6	4.7	29.3	59.5	38.0
կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	1.4	15.9	33.2	0.5	4.8	9.7	29.2
փայտ և փայտյա իրեր	10.4	11.5	23.9	-	-	-	-
թուղթ և թղթից իրեր	0.7	3.4	7.1	0.3	8.8	17.8	2.5 անգ.
մանածագործական իրեր	53.8	465.2	972.0	85.9	869.4	1 774.7	182.6
կոշիկեղեն, գլխարկներ, հովանոցներ	23.5	152.9	323.0	1.6	42.5	86.0	26.6
իրեր քարից, գիպսից, ցեմենտից	24.8	62.7	130.8	149.3	257.5	526.0	4.0 անգ.
թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	0.1	2.0	4.1	-	-	-	-
ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	29.8	94.9	198.3	0.0	1.5	3.0	1.5
մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	12.8	113.3	236.7	38.6	270.0	549.1	2.3 անգ.
վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	3.2	28.8	60.7	2.2	10.2	20.8	34.3
սարքեր և ապարատներ	7.9	378.3	791.1	4.5	68.1	138.9	17.6
տարբեր արդյունաբերական ապրանքներ	59.3	336.6	702.7	43.4	320.2	659.3	93.8
արվեստի ստեղծագործություններ	0.0	1.4	3.0	-	-	-	-

Ստացված մարդասիրական օգնության ծավալներն ըստ երկրների

հազ. դոլար

	2015թ. հունվար-մարտ	Տեսակարար կշիռը, %	2016թ. հունվար- մարտ	Տեսակարար կշիռը, %	Աճի տեմպը, %
<b>Ընդամենը</b>	<b>7 866.2</b>	<b>100.0</b>	<b>7 667.4</b>	<b>100.0</b>	<b>97.4</b>
այդ թվում՝					
<b>ԱՊՀ երկրներ</b>	<b>14.4</b>	<b>0.2</b>	<b>1.8</b>	<b>0.0</b>	<b>12.5</b>
այդ թվում՝					
Ռուսաստանի Դաշնություն	9.5	0.1	1.8	0.0	18.9
ԱՊՀ այլ երկրներ	4.9	0.1	-	-	-
<b>ԵՄ երկրներ</b>	<b>1 075.3</b>	<b>13.7</b>	<b>1 752.9</b>	<b>22.9</b>	<b>163.0</b>
այդ թվում՝					
Գերմանիա	95.3	1.2	245.0	3.2	2.6 անգ.
Միացյալ Թագավորություն	44.7	0.6	177.7	2.3	4.0 անգ.
Նիդերլանդներ	281.9	3.6	83.8	1.1	29.7
Լեհաստան	27.8	0.4	-	-	-
Ֆրանսիա	58.4	0.7	227.8	3.0	3.9 անգ.
Իտալիա	194.8	2.5	452.2	5.9	2.3 անգ.
ԵՄ այլ երկրներ	372.4	4.7	566.4	7.4	152.1
<b>Այլ երկրներ</b>	<b>6 776.5</b>	<b>86.1</b>	<b>5 912.7</b>	<b>77.1</b>	<b>87.3</b>
այդ թվում՝					
Միացյալ Նահանգներ	1 848.0	23.5	2 427.9	31.7	131.4
Կորեայի Հանրապետություն	266.2	3.4	0.4	0.0	0.2
Հնդկաստան	409.7	5.2	62.3	0.8	15.2
Չինաստան	753.1	9.6	933.1	12.2	123.9
Ճապոնիա	20.1	0.3	1 677.8	21.9	83.5 անգ.
Մնացած երկրներ	3 479.3	44.2	811.2	10.6	23.3